ՆԱԻՐԱ ՆԱԶԱՐՅԱՆ
NAIRA NAZARYAN

ՈՍՏԻԿԱՆԻ ԱՆՁԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՈՐԱԿՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ոստիկանի մասնագիտական գործունեության մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու համար հարկավոր է ուսումնասիրել ոստիկանի անձի՝ որպես իր մասնագիտական գործունեության և աշխատանքային հարաբերությունների սուբյեկտի մասնագիտական այն որակներն ու վարքի առանձնահատկությունները, որոնք պայմանավորում են տվյալ գործունեության արդյունավետ իրականացումն ու աշխատանքի ընթացքում բարենպաստ միջանձնային փոխազդեցությունները: Դրա համար՝ առավել նպատակահարմար է կիրառել փորձագիտական գնահատման մեթոդը, քանի որ հոգեբանության մեջ ընդունված է հենց դրա օգնությամբ չափել մասնագիտական հաջողության տարբեր կողմերը և որոշել գործունեության գնահատման չափանիշները, հատկապես, երբ վերլուծվող գործունեությունը չունի չափման քանակական միավորներ[1]: Այս մեթոդի կիրառումը կարևորվում է այսպես կոչված «մարդ-մարդ» համակարգում ընդգրկված մասնագիտությունների դեպքում, ինչպիսին նաև ոստիկանի մասնագիտությունն է: Բացի այդ, փորձագիտական գնահատման մեթոդի կիրառումն արդարացված է նրանով, որ չափման ստանդարտացված ընթացակարգերը սահմանափակ են և չեն կարող բավարարել ժամանակակից հասարակության ներկայացրած բոլոր պահանջներին[2]: Այսպիսով, տվյալ աշխատանքի նպատակն է առանձնացնել ոստիկանի անձի մասնագիտական կարևոր որակները՝ հիմնվելով փորձագիտական գնահատման արդյունքների վրա:

Գրականության մեջ հաճախ փորձագիտական գնահատումը ներկայացվում է որպես տեղեկատվության հավաքման հատուկ կազմակերպված ընթացակարգ, որն ուղղված է օբյեկտի գնահատմանը և իրականացվում է փորձագետների կողմից հատուկ մշակված հարցարանների լրացման միջոցով, որոնք պնդումների կամ չափորոշիչների ցուցակ են[3]: Փորձագետ են համարվում

---

[1] Տես **Ավանեսյան Հ.Մ.** Փորձարարական հոգեբանություն / Ուսումնական ձեռնարկ. Երևան, Էդիթ-Պրինտ հրատ., 2010. - 288 էջ, էջեր 126-134:

[2] Տես **Шошин П.Б.** Метод экспертных оценок. М.: Изд-во МГУ, 1987.- 79 с., էջ 18:

[3] Տես **Мякушкин Д.Е.** Социально-психологические аспекты комплексной оценки персонала организации. Челябинск: Изд-во ЮУрГУ, 2004. – 76 с.; **Шошин П.Б.** Метод экспертных оценок. М.: Изд-во МГУ, 1987.- 79 с., էջ 17; **Ядов В.А.** Стратегия социолигического

որոշակի ոլորտում բարձր որակավորում ունեցող, փորձառու մասնագետները (լատ. expertus՝ փորձառու, գիտակ), որոնց գիտելիքների, փորձի և ինտուիցիայի հիման վրա հնարավոր է ստանալ հետազոտվող երևույթների գնահատականը[4]: Պ.Բ.Շոշինը նշում է, որ փորձագետի ընդհանուր կոմպետենտությունը նրա՝ փորձագիտական ընթացակարգին արդյունավետորեն մասնակցելու և փորձագիտության առարկայի վերաբերյալ բարորակ տեղեկատվություն հաղորդելու ունակությունն է: Փորձագետների ընտրությունը կատարվում է կոմպետենտության բոլոր չափորոշիչների՝ մասնագիտական, գնահատականների էքսպլիկացիայի և սոցիալ-հոգեբանական կոմպետենտության, ինչպես նաև փորձագետի բարեխղճության առկայությունը հաշվի առնելով: Ինչ վերաբերում է նրանց թվին, ապա առավել արդյունավետ է համարվում հետազոտության մեջ ընդգրկել հինգից տասներկու փորձագետների[5]:

Ոստիկանի անձի մասնագիտական կարևոր որակները պարզելու համար ձևավորվել է փորձագետների այսպես կոչված «ինստիտուցիոնալ» խումբ, որը ներառում է տվյալ կազմակերպության՝ ոստիկանության տարբեր աշխատակիցների ներկայացուցիչների ընտրանի, ովքեր ունեն մասնագիտական գիտելիքների բարձր մակարդակ և որակավորում: Հետազոտությանը մասնակցել են 11 փորձագետ, որոնք ընտրվել են՝ հաշվի առնելով հետևյալ չափանիշները՝ 15 տարուց ավելի մասնագիտական ստաժի առկայությունը, որից առնվազն հինգ տարին՝ ղեկավար պաշտոններում և զբաղեցրած պաշտոնական դիրքը՝ պատկանելիությունը ոստիկանությունում պաշտոնների գլխավոր խմբին:

Քանի որ փորձագիտական աշխատանքը լի է բազմաթիվ սխալներով և ենթակա է տարաբնույթ աղավաղումների[6], ուստի հետազոտությունը կազմակերպելիս և անցկացնելիս պահպանվել են փորձագիտական գնահատման մեթոդի հավաստիությունը բարձրացնող կանոնները, ինչպիսիք են փորձագետների ճիշտ ընտրությունը, նրանց գործունեության ճիշտ կազմակերպումը և այլն:

Պետք է նշել, որ գրականության մեջ առանձնացնում են տարբեր չափորոշիչներ արտակարգ պայմաններում գործող աշխատակիցների մասնագիտական կարևոր որակների գնահատման համար: Այսպես, Հ.Մ.Ավանեսյանը մշակել է արտակարգ և ոչ ստանդարտ պայմաններում աշխատող մասնագետների

исследования. Описание, объяснение, понимание социальной реальности. – М.: Добросвет, 2000.- 596 с., էջ 279:

[4] Տես **Экспертные** оценки в социологических исследованиях. / Отв. ред. С.Б.Крымский. – Киев: Наукова думка, 1990.- 320 с. էջ 53:

[5] Տես **Шошин П.Б.** Метод экспертных оценок. М.: Изд-во МГУ, 1987.- 79 с., էջ 48-49:

[6] Տես **Кулагин Б.П.** Основы профессиональной психодиагностики. Л.: Медицина, 1984.- 216 с., էջ 43-47; **Шошин П.Б.** Метод экспертных оценок. М.: Изд-во МГУ, 1987.- 79 с., էջ 18:

/փրկարար, ոստիկան, հրշեջ, զինվորական/ մասնագիտական կարևոր որակների գնահատման միասնական համակարգ[7], է.Բ.Գեղամյանը առանձնացրել է փրկարարների հոգեբանական կարևոր որակները[8], Ա.Վ.Ռոդիոնովը նկարագրում է մարզիկների՝ սպորտային գործունեության մեջ հոգեբանական պիտանիությունն ապահովող չափորոշիչները[9]:

Ոստիկանի անձի մասնագիտական կարևոր որակների փորձագիտական գնահատման չափորոշիչները մշակվել են՝ ելնելով պաշտոնի պահանջների և բուն աշխատանքի ուսումնասիրության և վերլուծության վրա հիմնվող մոտեցման դիրքերից[10]: Ոստիկանի մասնագիտական կարևոր որակների փորձագիտական գնահատման չափորոշիչների մշակումն իրականացվել է մի քանի հաջորդական փուլերով: Այսպես, նախ, հիմնվելով գրականության ուսումնասիրության վրա[11], կատարվել է ոստիկանի մասնագիտական գործունեության պրոֆեսիոգրաֆիկ վերլուծություն, և ըստ դրա՝ առանձնացվել են ոստիկանի գործունեության համար կարևոր մասնագիտական որակները: Ապա այդ որակներից կազմված ընդգրկուն ցուցակը (շուրջ 150 հատկանիշներ) ներկայացվել է մասնագիտությամբ հոգեբան փորձագետների քննությանը, ովքեր գտել, առանձնացրել են 50 հատկանիշներ, որոնք ընդգրկվել են փորձագիտական գնահատման հարցաթերթում: Այնուհետև, փորձագետների՝ տասնմեկ հոգուց բաղկացած ինստիտուցիոնալ խմբին առաջարկվել է 1-5 միավորանոց սանդղակով (1-բոլորովին կարևոր է, 5 – խիստ կարևոր է) գնահատել ներկայացված 50 որակների կարևորությունը ոստիկանի մասնագիտական գործունեության

---

[7] Տես **Аванесян Г.М.** Принципы построения системы психологической оценки и отбора персонала // «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովի նյութեր. - Երևան, Էդիտ Պրինտ հրատ., 2011թ. – 422 էջ, էջեր 27-31:

[8] Տես **Гегамян Э.Б.** Психологически значимые качества спасателей в системе профессиональной пригодности: Автореф. дисс. канд. психол. наук. – Ереван, 2008, էջ 11:

[9] Տես **Родионов А.В.** Психология физической культуры и спорта. Учебник. М.: Академия, 2010. -368 с.

[10] Տես **Агеев В.С.**, Базаров Т.Ю., Скворцов В.С. Методика составления социально-психологической характеристики для аттестации кадров. – М.: Изд-во МГУ, 1986.- 124 с.; **Мякушкин Д.Е.** Социально-психологические аспекты комплексной оценки персонала организации. Челябинск : Изд-во ЮУрГУ, 2004. – 76 с.; **Управление** персоналом: Учебник для вузов /Под ред. Т.Ю. Базарова, Б.Л. Еремина. — 2-е изд., перераб. и доп. — М: ЮНИТИ, 2002. —560 с.

[11] Տես **Безносов С. П.** Профессиональная деформация личности. - СПб.: Речь, 2004. -272 с.; **Васильев В.Т.** Юридическая психология. - СПб.: Питер, 2002. – 656 с.; **Прикладная** юридическая психология: Учеб. пособие для вузов /Под ред. А.М.Столяренко. - М.: ЮНИТИ-ДАНА, 2001. – 639 с.; **Романов В.В., Кроз М.В.** Психологическая оценка при профессиональном отборе кадров для прокуратуры (современное состояние и перспективы) // Вопросы психологии. – 1994. № 3, с. 94-108.; **Романова Е.С.** 99 популярных профессий. Психологический анализ и профессиограммы. 2-е изд. СПб.: Питер, 2003. -464 с.

հաջող և արդյունավետ իրականացման համար: Այդ 50 որակներից փորձագետներն առավելագույն միավորներով են գնահատել 13 հատկանիշներ, որոնք, ըստ նրանց, ապահովում են պարտականությունների արդյունավետ կատարումը: Ստացված արդյունքների վերլուծությունը կատարվել է՝ յուրաքանչյուր որակի տոկոսային արժեքը հաշվելով: Ստորև ներկայացնում ենք ոստիկանի մասնագիտական կարևոր որակների փորձագիտական գնահատականների արդյունքները:

Աղյուսակ 1.

Ոստիկանի մասնագիտական կարևոր որակների փորձագիտական գնահատականները

№	Անձնային / մասնագիտական որակներ	Փորձագիտական գնահատականները 1-5 միավորային սանդղակով											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	%
1	դիմացկուն	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	100
2	արհեստավարժ	5	5	5	5	5	5	4	5	5	5	5	98
3	հավասարկշռված	5	5	5	5	4	5	5	4	5	5	5	96
4	համարձակ	5	4	5	5	5	5	4	5	5	4	5	95
5	պատասխանատու	5	5	5	4	5	4	5	5	4	5	5	95
6	ազդեցիկ	5	5	5	4	5	5	5	4	5	4	5	95
7	անկողմնակալ	5	5	4	5	5	5	4	5	5	5	4	95
8	օրինակելի	4	5	5	5	4	5	5	4	5	5	5	95
9	կոկիկ, վայելուչ արտաքինով	5	5	4	5	5	4	5	5	5	5	4	95
10	արժանապատիվ	4	5	5	5	4	4	5	5	5	5	4	93
11	քաղաքավարի	5	4	5	5	4	5	4	5	5	4	5	93
12	ազնիվ	4	4	5	4	5	5	4	5	5	5	4	90
13	խելացի	5	4	4	4	5	5	4	4	4	5	4	87

Աղյուսակում ընդգրկվել են փորձագետների գնահատմանը ներկայացված բոլոր հիսուն որակներից առավելագույն միավորներ ստացած տասներեք որակները, որոնք դասավորված են տոկոսային միավորների նվազման կարգով: Ինչպես երևում է աղյուսակից, առաջին տեղում է «դիմացկուն» որակը (100%), վերջինում՝ «խելացի» որակը (87%): Մնացած որակների տոկոսային

արժեքները մի փոքր տարբերվում են՝ տատանվելով 96-93%-ի միջակայքում, ինչը վկայում է այս որակների հավասար կարևորության մասին: Փաստորեն, փորձագետները ոստիկանի մասնագիտական գործունեության հաջող և առդյունավետ իրականացման համար առավել կարևորել և բարձր միավորներ են դրել վերը թվարկված տասներեք որակներին:

Հատկանշական է, որ փորձագիտական հարցաթերթում ներառված բուն հոգեբանական շատ որակներ, ինչպիսիք են «ինքնավստահ», «շփվող», «հանդուրժող», «սկզբունքային», «հաստատակամ», «նախաձեռնող», «ինքնատիրապետում դրսևորող», «կամային» և այլ որակները, անտեսվել են փորձագետների կողմից և ավելի ցածր գնահատականներ են ստացել: Այս հանգամանքը թերևս կարելի է բացատրել գնահատողների բառապաշարի յուրահատկություններով, որոշակի դիրքորոշումների և արժեքային կողմնորոշումների առկայությամբ, ինչպես նաև մասնագիտության առանձնահատկություններով:

Չնայած գրականության մեջ այլ կարծիքներ են արտահայտվում ոստիկանի անձի մասնագիտական կարևոր որակների մասին, դրանք լիովին չեն համապատասխանում տվյալ հետազոտության շրջանակներում անցկացված փորձագիտական գնահատման արդյունքներին: Բանն այն է, որ որքան էլ փորձագիտական աշխատանքի արդյունքները կրեն սուբյեկտիվիզմի որոշակի հետք, այնուամենայնիվ, նման չձևականացված խնդիրների առնչվելիս փորձագետների ինտուիցիայի, փորձի և գիտելիքների վրա հիմնվող կարծիքները տեղեկատվության հիմնական աղբյուրն են և նպաստում են հետազոտական խնդիրների լուծմանը: .

Այսպիսով, ոստիկանի մասնագիտական գործունեության հաջող և արդյունավետ իրականացումը պայմանավորող մասնագիտական կարևոր որակների վերաբերյալ փորձագիտական գնահատման միջոցով ստացված տվյալները թույլ են տալիս քանակական միավորներով արտահայտել հետազոտվող հիմնախնդրի հիմնական գործոնները, ինչը կարող է օգտագործվել ինչպես հետազոտական աշխատանքում ընդհանուր կողմնորոշման համար, այնպես էլ որպես օբյեկտիվ տեղեկատվություն, որն անհնար է ստանալ այլ միջոցներով:

The expert judgement of the major professional qualities of the police personality

The aim of this work is to point out the most important professional qualities of the police personality based on the results of the expert judgement. It is accepted in psychology to measure the different aspects of professional success through the method of expert judgement and to decide the parameters of the activity estimation. The experts have selected 13 qualities among 50 one, which according to them are more important for police officers to fulfill their professional activity efficiently.

The results of professional important qualities that determine successful and efficient fulfillment of the police officers' professional activity, received through the expert judgement, allow to express quantitatively the basic factors of researched problem.